

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1897 տարեկանի

Պոլիարիոյ համար տարեկան 10 ֆր
" " " " " 1/2 " 5 "
Արտատպանի համար " 12 "
" " " " " 1/2 " 6 "
" Կանխիկ վճարելի

Նամակ դրամ եւայլն խրկել հետեւեալ հասցեով
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԻՐԱՌՈՒՆՔՆԵՐ ԼՐԱԳՐՈՅ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).

Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
եւ չեն ղրկուիր եւ յարմար դատ
ուածներն միայն կը հրատարակ
ուին ամբողջովին կամ մասամբ:

Ծանուցմանց տողը 20 սանթիմ.
երեքէն աւելի անգամներու համար
20 աւ 100 գեղջ կը լինի:

ՄԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

(Շար. Ասիւ. քիշեմ եւ վերջ)

Ճշմարիտ է որ ըստ երեւոյթի մեր
Ռուսիոյ ոչ միայն չափաւորեց ան-
կարեկիւր գոնուեցաւ մեզ նկատ-
մամբ Սասունի ջարդերէն ի վեր,
ալ և ոխերիմ հակառակորդ երեւ-
ցաւ հայ ազգին, այնպէս որ ի-
րաւամբ կարելի է հարցնել թէ
ինչպէս կրնանք բարիք սպասել
տէրութենէ մը, որուն վեհապետը
հայկական ջարդերուն ժամանակ
կրնար խօսքով մը գոնանք կե-
ցենել եւ թողուց որ ամբողջ թրքա-
հայութիւնը հարի, սուրի և կռ-
ղողատի մասնուի:

Մարդասիրական տեսակէտով որ-
քան անշուք և անակնուշիկ, այն-
քան ազատապարտելի աշխարհ-
ութիւնը սակայն շատ գիւրդին կը
պարզուի և կը մեղմանայ իսկ, ե-
թէ մեր տեսութեանն չկորսնցնենք
որ հայկական խնդրին մէջ Ռու-
սիոյ մենամարտեցող իր անհաշտ
թշնամիին, Անգլիոյ դէմ, որ ու-
ղեց մեզ պաշտպանել ի վնաս ու-
սական շահերուն. անգլիական
պաշտպանութիւնն էր որ մեզ սու-
ղի նստաւ, յորուցանելով մեզ դէմ
Ռուսիոյ հակառակութիւնը. և
այս երկու ոտիս տէրութիւններ
այնքան լայնածաւալ շահեր ունին
իրարու դէմ՝ պաշտպանելիք, ի-
րենց գիւտագէտներու հաշիւները
այնքան ընդարձակ շրջանակի մը
մէջ կը գտնուին, որ քանի մը հա-
րիւր հազար հայու ջարդը շրջա-
նակին հազիւ նշմարելի մէկ կէտը
կրնայ կազմել:

Ռուսիոյ Անգլիոյ թշնամին է և
ոչ հայ ազգին: Ասոր մէկ նոր և
աչքի վարնող ապացոյցն է այն
հզօր պաշտպանութիւնը, զոր
Պարսկաստանի վերջին հակա-
հայ շարժումներու ժամանակ
առաւելան կառավարութիւնը նը-
ւերեց մեր այնտեղի ազգակից-
ներուն: Թէհրանի ուսու գետնին
յայտարարեց պարսկի կառավա-
րութեան թէ սահմանադրի ուսու
զինուորաց մէկ մասը պարսկական
հողը պիտի մանէր հայերը պաշտ-

պանելու համար, եթէ տեղական
իշխանութիւնները չկարենային ան-
միջապէս զսպել պարսկի խուժա-
նը: Իսկ Դաւիթբէի ուսու հիւպա-
տոսը տեղւոյն կառավարին ըսաւ
սա յաւէտ նշանակելի խօսքը.
«Պարսկաստանի հայերը մեր պաշտ-
պանութեան տակ են. եթէ մենք
թորաքիտ չայրը չպաշտպանե-
ցինք վերջին ջարդերուն ժամա-
նակ, պատճառն այն է որ անոնք
մեզ չգիտեցին»:

Այս, մեր ահաւոր դժբախտու-
թեանց մէջ Ռուսիոյ կարծես ու-
ղեց մեզ ըսել. «Ձեր միակ բնա-
կան պաշտպանը ես էի. դուք փո-
խանակ ինձմէ և միայն ինձմէ
խնդրելու ձեր ցաւերուն դարմա-
նը, ձեր կանակը ինձ դարձուցիք
և գիտեցիք իմ ոխերիմ հակառա-
կորդիս. պէտք է որ մի անգամ
ընդ միշտ խրատուելու համար
չարտար պատժուիք և հասկնաք
թէ ինչ կ'արժէ Անգլիոյ պաշտ-
պանութիւնը»:

Իրաւ ալ հասկցանք. դասերնիս
տառնք. զոնէ սաղափին խորապէս
համապատասխան ենք այսօր որ Անգ-
լիոյ ծովային զօրութեան համար
անմատչելի է հայաստան: Մեծն
Բրիտանիոյ հռչակաւոր նախարա-
րապետը զայս կրկնակի յայտա-
րարեց պաշտօնապէս: Անմտու-
թեանց մեծագոյնը պիտի ըլլար
այսուհետեւ իրմէ սպասել հայ ժո-
ղովրդին փրկութիւնը:

Այս ճշմարտութիւնը արդէն
ինքնին բաւական է մեզ միշտ
դէպ Ռուսիա. սակայն գուցէ
հարցուի մեզ թէ ինչ ապահովու-
թիւն կայ որ այս տէրութիւնը,
երբ իրեն հովանաւորութեան ա-
պաւինինք, պիտի ուղէ պատկել
մեր ամենէն չափաւոր յայտերը:
Արդարեւ այս մասին բացարձակ
ապահովութիւն մը չունինք, բայց
կան քաղաքական հաշիւներ որոնք
մեզ նպաստաւոր կ'ընեն: Ռու-
սիոյ թէեւ Մեծ Հայքը մօտ տա-
րինի իւրացնելու գիտումներ ու-
նենայ, չկրնար նոյն յաւակնու-
թիւնը ունենալ փոքր-հայքի և այլ
աւելի հեռու որ երկիրներու հա-
մար, որոնք զինք պիտի մատ-
ցեն Միջերկրականի, որովհե-

տեւ այսպիսի ծրագրի մը գոր-
ծադրութեան դէմ պիտի ելլէր
ամբողջ Եւրոպա և ամենէն առաջ
նոյն իսկ իր գաշակիցը, Ֆրան-
սա՝ իրեն Միջերկրականի տէրու-
թիւն: Բնական է որ ուր Ռու-
սիոյ չկրնար ինք հասնիլ, պիտի
փափագի գոնէ հոն տիրող տես-
նել տարր մը որ ընդունակ ըլլայ
մասկովեան գիւտագիտութեան
ներշնչումներուն:

Բարեբախտութիւն մըն է մեզ
համար որ Ասիական թուրքիոյ
մէջ չկայ թիւով քիչ շատ կարեւ-
որ քրիստոնեայ, որիչ տարր մը
որ կարենար իր բարոյական ձիւ-
քերով յարմար համարուիլ թուրք
իշխանութեան յաջորդելու, երբ
ստոր վերջին ժամն հնչէ: Եւ Անգ-
լիոյ, եթէ հակառակ ալ ըլլար
մեզ՝ իրեն Ռուսիոյ պաշտպան-
եալներու, չգտնելով ուրիշ ընտ-
րելի՝ լուսաւոր այլապէս սեպէր թուր-
քիոյ մէկ մասին յանձնուիլ հայոց
ձեռքը, մտածելով որ թերեւ իր
գիւտագիտութեան համալուծող
ճարպիկութիւնը յաջողի նոյն ինք-
նավար Հայաստանը որ մը իր
թումը գործածել ուստական յա-
ռաջխաղացութեան դէմ, մինչդեռ
նոյն երկիրները թուրքին ձեռք
մնալով միշտ աւստական գրաւման
ենթակայ կը մնան:

Ամեն պարագայի մէջ երկու
հակառակորդ տէրութեանց մէկին
պաշտպանութեան պէտք ունինք և
ըստ մեզ՝ չարաչար կը սխալին ա-
նոնք որոնք կը կարծեն թէ միմիայն
մեր ուժերը և յեղափոխական շար-
ժումները կը բաւեն Եւրոպան
ստիպելու որ մեզ օգտակար կեր-
պով մը լուծէ հայկական խն-
դիրը:

Անգլիոյ գիւտագիտական աւ-
պարէշին մէջ կատարելապէս պար-
տուեցաւ և զմեզ լքաւ ամօթալից
կերպով: Այսուհետեւ հայերս չենք
կրնար վարանիլ մեր պաշտպանին
ընտրութեան մէջ:

Ռուսն է այն և անկէ զոտ ոչ
"ք":

Յ. Պ.

ԱՌԱՂԱՍՏՈՒԹԻՒՆ

Առ Գաւեր-Արշալիր

Աղբային նուիրական աւանդու-
թիւններ կան որոնք սրբատուփի
մը պէս խնամքով պահուելու են,
վասն զի անոնց ելծումը կրնայ
վնասակար քայքայումներ առաջ
բերել:

Բայց այն աւանդութիւններ,
որոնք օրէնքով նուիրագործուած
ըլլալով հանգերձ, ոչ միայն բան
մը չ'են աւելցնել ազգի մը բարո-
յական ուժերուն վրայ, հապա ա-
նոնց չգոյութեամբ նախապաշա-
րուած մը վերցած կըլլայ, — և ամեն
սնդամ որ աղբ մը նախապաշա-
րուած մը կը վանէ՝ քայլ մը առած
կըլլայ դէպ ի լուսաւորութիւն, —
այդ աւանդութիւնները մտքի վար-
դացման համամատուցեալ հե-
տգետէ պէտք է անհրաժեշտ:

Աւասիկ այս կարգի աւանդու-
թիւններէն է այն որուն համամատ
Տ. Ղեւոնդ քահանան երկրորդ ան-
գամ ամուսնանալու չէ եղեր. նոյն
իսկ մեղաւոր է եղեր աղբային
կոյր աւանդութիւն մը արհամար-
հելով ու, ձգելէ յետոյ իր կը-
րօնական հանգամանքը, երկրորդ
սնդամ ամուսնանալով:

Թողունք աղբերու կրօնական
պատմութեան իմաստասիրութեան
ցոյց տուած բարեշնչումները դա-
րերու հոլովման մէջ, ի մասին
նոյն իսկ կրօնական սովորութիւն-
ներու, և մենք ուղղակի մեզ պատ-
կանած նիւթին վերլուծումը ը-
նենք պարզեալով, զերծ անխոր-
հուրդ գիւրգիւզածութենէ:

Մեր եկեղեցական օրէնսդրու-
թիւնը կը արամադրէ որ քահա-
նան ամուսնացած ըլլայ:

Ինչո՞ւ:

Որովհետեւ անիկա միակ նը-
ւիրական մարդն է, օժտը-
ւած բարոյականի ամեն գեղե-
ցիկ ձիրքերով, որ պիտի մտնայ
ժողովրդի ամեն խաւերուն մէջ,
մանկան, երիտասարդին, տարե-
ցին ու ծերին, մանկամարդ աղ-
ջկան, կնոջ ու պառաւին բով,
մտքի ու սրտի կատարեալ հան-

գարտութեամբ, զգացողութեան ամեն թելագործներէն ու գրգռուածներէն զերծ, նոյն պարագային և նոյն հայրական գործով զիտելով ծերն ալ գեղեցիկ կ'ընեն ալ:

Եւ մեր հին հայրապետները, իրենց լայն հեռատեսութեամբը, նշմարել են թէ մարդ մը, որ այսպիսի փափուկ պաշտօն մը պիտի ստանձնէ, պէտք է ամուսնական վիճակի ենթարկուած ըլլայ, հեռու մնալու համար այն անընկճելի փորձութիւններէն ուրոնք անբաժան են մարդկային խառնուածքէն:

Արդ, սկզբամբ ընդունուած է ուրեմն որ քահանան ամուսնական վիճակ ունենայ, այսինքն, աւելի որոշ խօսելով, կ'ըն մը ունենայ իր կեանքին կապուած, կ'ըն մը որ երաշխիք մը կը նկատուի քահանային որբանուէր ու անմարդ պաշտօնավարութեանը: Ամուսնութիւնը թոյլատրելով՝ եկեղեցին կը հրաժարեցունէ քահանան աշխարհի ցանկութիւններէն. այսինքն կը նկատէ որ քահանան ալ մարդ ըլլալով միշտ ենթակայ է ցանկութիւններու:

Խեղացի՝ տնօրինութիւն:

Անգամ մը որ ամուսնութիւնը անհրաժեշտ համարեցինք քահանային համար, ինչո՞ւ կրկնամուսնութիւնը ուխտագրութեան չհակադրուեցան ոճիւր նկատուի:

Չէ՞ մի որ անկա մինչեւ այն տարիքն ուր, իբրեւ մարդ ենթակայ է զանազան կիրքերու, կրնայ առանց կնոջ մնալու դժբախտութեան հանգիստի: Ենթադրենք երեսունհինգ կամ քառասուն տարեկան քահանայ մը որուն կինը կը մեռնի: Մեր եկեղեցական օրէնսդրութիւնը այն պատճառաբանութիւններուն համաձայն զորս թուեցինք, հարկ կը տեսնէ որ առնական ամեն կարողութիւններ վայելող, աշխարհային ամեն փորձութիւններու ազամայ ենթարկուող մարդ մը քահանայագործելու համար՝ ամուսնացած ըլլայ: Արդ, կ'ըն մեռած քահանան պէտք է որ կրկին ամուսնանայ:

Ո՛չ, կըսէ մեր եկեղեցական օրէնսդրութիւնը, ինչպիսի ամենաձախող հակասութեան մը մէջ:

Ինչո՞ւ, քառասուն տարեկան մարդը յանկարծ զրկուած կըլլայ բոլոր այն աշխարհային՝ մարդկային անզուսպ փափագներէն, որոնց համար էր նոյն իսկ որ արտօնուած էր անոր առաջին ամուսնութիւնը:

Քահանային երկրորդ անգամ ամուսնութիւնը չարտօնելով, ուրեմն եկեղեցին կը ներէ որ այլիք քահանան այլ եւս ազատ ըլլայ բոլոր այն կապանքներէն որոնց տակ ճնշուած կը գտնուէր ան, ու արձակ անսանձ կեանք մը վարէ: Իր պաշտօնին բերմամբ մտնայ ելլայ ընտանիքներու մէջ, անեն-

րելի շահատակութիւններ գործէ, արտա բերէ կրօնքին ու հայ եկեղեցականութեան:

Ի՞նչ ըրաւ Ղեւոնդ քահանան. պարկեշտ ու շրջահայեաց մարդ, աչքին առջեւ բերաւ մեր կրօնական այս արամադրութեան խիստ ու պահանջող ոգին, որուն գէժ ըմբոստանալ անհնարին էր, չուզեց ալ իր փիլոնը աղուէսի մորթ մը ընել՝ անոր տակ մեքենայութիւններ յօրինելու և իր քարուքած կրօնքը առաջնորդ ընելու համար. անկեղծութիւնը ձեռք առաւ ու ձգեց իր սքեմը:

Երէցկիւններուն «անմահ գիցուհիներ» չըլլալը, Ղեւոնդ քահանային առաջ մեր եկեղեցական օրէնսդրութիւնը պատրաստողները գիտնալու, և անոր համեմատ կարգադրութիւն մը ընելու էին, որ պէս զի աւելի լուսաւորեալ ժամանակներու մէջ, մեքենայութիւնը անախտապաշտելի շրջաններու միջոցին չպատահէին տատնի տըլուր ու գայթակղեցուցիչ ապօրինութիւններ:

Այն թուականին ուր մեր հոգելոյս կրօնաւորները գծեցին վերջին բառը մեր եկեղեցական օրէնսդրութեան, թերեւս ժողովըրդային ըմբռնութիւնները տարբեր էին, հոգեւորականութիւնը բացարձակ կը տիրէր, և սրբապաշտ հոգիները ստուար թիւ մը կը ներկայացնէին: Բայց, առաջ, ան երանելի ժամանակները անցան դային, հետ տանելով իրենց բոլոր խնկալի բարեպաշտութիւնը: Հիմակ նիւթական ու դրական անսուք գարեբու մէջ սուղուած ըլլալով մարդկութիւնը, հարկ է և անհրաժեշտ հարկ է որ մեր հին օրէնքներ վերաքննուին, — ինչպէս եղած են ուրիշ ազգերու մէջ ու կըլլան, — յարմարեցուն արդի տիրող բարձրուն, առանց անոնց տոհմային ոգին խախտելու սակայն:

Չեմ գիտեր ի՞նչ բոլոր այս ողջամիտ պատճառաբանութիւններուն արեւի պայծառութեամբ դուրս ցայտելէն յետոյ, այլ եւս կարելի՞ է պարտաւի Ղեւոնդ քահանային ընթացքը, որուն արդիւնքը սա եղաւ վերջապէս որ քահանայ մը պակսեցաւ մեր մէջէն, փոխարինել մնալու և մեղսապարտ կեղծիքով մը անտանելի տրամ մը դառնալու հայկական եկեղեցիին:

Ե.

ՎՏԱՆԳ ՈՒ ԴԱՐՄԱՆ

Եթէ թրքական բարբարոսութիւնները մեզի ամբաւ չարիքներ հասուցած են դարերու երկար հուլովման մէջ. եթէ կողմնակալութիւնը, խտրել և իրենց բոլոր օրէնքները ոտնակոխ ըրած են

հայերու անհատական և ազգային իրաւունքները, միշտ ամեն բարիք, ամեն առանձնաշնորհում՝ ֆուրանի զաւակներուն վերապահելով, պէտք է խոստովանել միանգամայն թէ նոյն անիրաւութիւնները և խտրութիւնները իրենց ամբաւ օգտակարութիւնը ունեցած են մեր ազգային գոյութեան տեսակէտով:

Հարածուած և հուսաւարապէս տառապող հայերը ընական ձգտում մը ունեցած են իրարու մօտենալու, զիրար պաշտպանելու, պահպանելու և ըստ կարելոյն զօրացնելու իրենց գոյութեան պայմանները:

Օտար տիրող ազգին հետ մեր ձեցումը անհնարին ըլլալով, ձուլում մը երբէք չէր կրնար տեղի ունենալ երկու բոլորովին հակառակ տարբերութեան մէջ, քանի որ, փոխադարձաբար, թուրքը ու հայը իրենց ամենէն նուիրական համուզումները կ'անգոսնէին. առաջինը յայտ յանգիման, իսկ երկրորդը լուսնային՝ սրտին տմենէն թաքուն զգացումներով:

Ասոր համար հայը, հակառակ ամենէն աննպատակ պայմաններու, շատ անգամ առանց դպրոցի, առանց եկեղեցիի և առանց զէնքի, միշտ հայ մնաց և հետզհետէ հայացաւ:

Նոյնը ի Պարսկաստան, նոյնը նաեւ Ռուսիոյ մէջ, ուր ճնշողական օրէնքները աւելի քան երբէք վառ պիտի պահեն հայութեան ճրագը:

Հետևաբար կը կործնէ թէ հայութեան սպառնացող վտանգները համեմատաբար աւելի զօրաւոր են այն երկիրներու մէջ ուր անիրաւութիւնները և խտրութիւնները զոյլութիւն ունեցած չեն:

Եթէ այսօր Ռուսիոյ հայերը ազգային տեսակէտով այնքան աննախանձելի կացութեան մը մէջ կը գտնուին, պատճառը անշուշտ տեղւոյն հեռաւորութիւնը չէ, այլ միջավայրը:

Ամեն օր, անիրաւութիւններ, խտրութիւններ չեն եկած իրենց իմացընելու թէ իրենք օտար են, թէ հայեր են:

Այլ երբեւ ճշմարիտ երկրացիներ նոյն իրաւունքները վայելելու համար, նոյն իղձերով ու յոյսերով անանկնուն համար, այլ եւս նոյնացած են: Պետական դրպրոցները որոնց մէջ այնչափ սիրալոյս կը զգուցանուին իրենց զաւակները, պէտք չէ զգացուցած իրենց՝ ազգային դպրոցը հասցնել փոփոխելի տատիւների մը:

Այն համակրանքը որուն առարկայ են տիրող տարրին կողմանէ, զիրենք տնայն կը հրապուրէ, որ ալ անոնց ամեն հաստատութիւնները, ամեն աւանդութիւնները, կեանքի պարագաները, նոյն իսկ անունները իրենց սիրելի կը դառնան և իւրացընելու կը ձգտին:

Պուկարիոյ մէջ եթէ ձուլման

այդ միտումը այնքան չեղտուած չէ, պատճառը այն է որ թարմ են տակաւին թուրք բռնապետութեան յիշատակները. և հին սերունդը գեռ հոն կեցած է իրրազային աւանդութեանց պահպան:

Սակայն դիւրին է ենթադրել թէ ապագայ երիտասարդութիւնը պուկար վարժարաններու մէջ դաստիարակուած, բոլորովին յափշտակուած անոր փառքերով, և անտեղիակ իր ազգին վերաբերեալ իրերուն, տակաւ օտարանայ և անտարբեր ակնարկ մը միայն ուղղէ հայութեան:

Թէ ամենուն համար երախտադիտութեան պարտք մըն է սիրել այն երկիրը որ քեզի կը սիրէ և միջոցներ կուտայ քեզի զարգանալու, կըմբռնէ՝ իայց ամսթամի կը գտնեմ երբ այսպիսի պարտքի մը կատարումը մոռցնիլ տայ ահա հրամանն ազգային գոյութեան որ մեզի կուղուրի դարեւ լուսնային:

Պէտք է գիտնանք թէ մենք, որ այս քրիստոնեայ անաշուտ երկիրներու մէջ կապրինք, ինչ որ մէկ շուրջը կը տեսնենք, յառաջ գիտութիւն և լոյս մեր ամեն բայլափոխին, առանք բոլորն ալ հայութիւնը չեն, ո՛չ կարօլ թագաւորը, ո՛չ Քարմէն-Սիւլա Կազուհին և ո՛չ ալ Քնէպը. այն փայլուն զօրագունները որոնց առաջ գնացք մեր սրտերը թունդ կը հանէ, մեր չեն և ո՛չ Պուրիշի շքեղ սքրաւանները և կամ մեր տղմուտ ուշիցան: Միայն առժամայ հանգիստեսներն ենք անոնց:

Եթէ մենք յափշտակուինք անոնցմով, մոռնալու չափ մեր ազգը որ այնքան կարօտ է մեր աշակցութեան, եթէ մերը կարծենք ինչ որ կը տեսնենք, պարզապէս երախտադիտութեան ապացոյց մը տուած պիտի ըլլանք: Եւ յետոյ, տիրող ազգը մեր վրայ այն ամեն աւելի համարում պիտի ունենայ, երբ ապահով պիտի ըլլայ թէ ազգասիրութեան առաքելութենէն զուրկ անհատներ չենք և կազմաւ լոյս և շուարածներէ բաղկացած ամբողջ մը չէ այն ազգը որուն կը պատկանինք:

Հարկ է պնդել թէ իրերու այս վիճակին արմատական դարման մը տանելու միակ միջոցն է դիւցազնական ճիգեր թափել, Ռուսիոյ և Պուկարիոյ ազգային կրթարանները զարգացնելու, բարեփոխելու և զարգացնելու:

Աւելին կայ: Հարկ անհրաժեշտ է որ այդ կատարելագործուած տարրական կրթարաններէն զատ, գլխաւոր քաղաքի մը մէջ, զորօրինակ ի Պուրէշ, կեդրոնական գիշերօթիկ վարժարան մը հաստատուի, ուր Ռուսիոյ և Պուկարիոյ բոլոր կէտերէն պատանիներ յաճախեն և ձեռնհաս հայ ու սուրբիչներու ձեռքով հայութիւնը ուսանին:

Այս կեդրոնական կրթարանի գաղափարը որ կրնայ դիմում մարմին գտնել ինքն երկու երկրորդը ու այնպիսի կարող ազգայինները իրենց բարեկամական թիւերը չի գլանան, կրնայ միանգամ ընդ միշտ մեկուսացնել այն վտանգը որ ազգային տեսակետով թերեւս նոյնքան կորստաբեր է Պուլիս քաղաքի և Ռումանիոյ հայերուն համար որքան թուրքին բոլոր տմարդի հալածանքները թուրքիոյ հայերուն համար :

Գամեթ-Ալլաւի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎ ՄԸ

Արմենիի մէջ կը կարգանք թէ Հայաստանի բարեկամայ Միջազգային ընկերութիւնը մայիս 19ին ի Լոնտոն ժողով մը ունեցիր է, որ ներկայ էին Անգլիացի, Գերմանացի, Պոլսիացի ներկայացուցիչներ :

Տիարք Մընրօ Ֆերիստըն, Տիւրքիոյ ժողովին Մարշալ, ուսուցիչ Անուար, Լէտի Անտէրսըն, Տօքթ. Լէրսիուս, Վեր. Կրին իրենց տեղեկագիրներով ծանուցին այն նշանակալից արարքը որ կարողանալով ներսը գրկուած են ցարդ Անգլիայէն, Սիւսիականէն, իրաւաստայէն, Գերմանիայէն և Ամերիկայէն :

Հայր Ֆելիքս Դարմիստի իր մէկ քննադատական ակնարկէն հայոց օգնելու պէտքը և այս մասին Եւրոպայի պարտականութիւնը հաստատելու համար, իմացուց թէ Գերմանիոյ հայոց մէկ միլիոն ֆրանկ զրկած է, որուն կէսը իր, Հայր Դարմիստի ձեռքով : Ուրիշ ֆրանսացի ժողովուրդական մը, Վեր. Արբիս 100,000 ֆրանք հաւաքեց է բողոքական ֆրանսացիներէ :

Տօքթ. Լերսիուս, քարտուղար գերման և հայկական ընկերութեան կեդր. յանձնաժողովին, իմացուց թէ Գերմանիոյ մէջ հանգանակուած է 53,000 անգլ. ոսկի ինպսպ 14 որբանոցներու որոնք հաստատուած են թուրքիոյ 12 քաղաքներուն և վերջէնմատօրֆի (Գերմանիա) ու վառնայի մէջ, Գերմանիոյ կայսեր Հայերուս նշանակամար բռնած անորակելի դերքը այնքան խոցած է մեր սիրտը, որ իրական սփոփանք մըն է մեզ համար կարգաւ այն խօսքերը, որոնցմով Տ. Լէրսիուս վերջացուց իր ճառը. «Եթէ թուրք մաքսաւորները, ըստ նա», իրենց զմեկով կը կտրեն Հայաստան բառը իրենց ձեռքը անցած լոյսը քարտէսներէն, և բողոքական գիւտնա գէտներուն մէջ չպիտի գտնուի երբէք Եւրոպ մը որ կարող ըլլայ Եւրոպայի քրիստոնէից արտէն խըլու Հայաստանի այսուհետեւ անմասնաւոր դարձած անունը» :

Ժողովին, որ ներք. նիստ ունեցաւ ներկայ էին նաեւ Տ. Միւսսա Չե-

րազ, որ տեղեկագիր մը ներկայացուց թուրքահայաստանի 23 բողոքներու և գիւղերու այրիներուն և որբերուն թիւին և առհասարակ նոյն տեղերու Հայոց մէջ տիրող թշուառութեան վրայ :

Անգլիոյ Հայոց հովիւ Տ. Թէոփիլոս Պուլիսցի, յայտարարեց թէ Հայերը ինքզինքնին բախտաւոր կը զգան տեսնելով որ զանազան եկեղեցիներու պատկանող քրիստոնեաներ միացած կաշխատին այս գլխաւոր գործին յաջողութեան համար և մինչև իսկ տեղ տեղ կը գործակցին հայկական ազգային եկեղեցիին կղերին հետ : Նա յայտնեց նաեւ թէ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքը շրջաբերականով մը պատուիրած է հայ կղերին օգնել օտարազգի մարդասէրներուն պատշաճ կրթութիւն մը տալու հայ որբերուն՝ անոնց սովորեցնելով իրենց մայրենի լեզուն և իրենց ազգային եկեղեցիին վարդապետութիւններն ու ծէսերը :

Ռօշտիմէրի Լօրտ եպիսկոպոսը ծանուց թէ Տ. Կրիստոթօն 50 անգլ. ոսկինոց չէք մը զրկած է Եւրոպայի հայ կարօտեալներու :

Տ. Մ. Արման խօսեցաւ այն գործարաններուն վրայ զորոք բացած է ի վառնա և որոց արտադրութիւնները կիպրոսի գաղթականներու ձեռագործներուն հետ ի նոյն գործած էին իսկ Տ. Ամստեղեկութիւն տուաւ իր Լարնաքայի (Կիպրոս) որբանոցին վրայ :

Տիարք Կարապետ Բակոբեան և Յ. Մուսախան նոյնպէս մասնակցեցան ժողովին աշխատութեանց :

Տ. Թրիտիլոյ, երիտասարդ և անձնուէր հայաստէրը, բողոքեց կրօնական տարածման ոգոյն դէմ, որ կը նշմարուի կարգ մը բողոքական ու կաթոլիկ միսիոնարներու մէջ ի միաս Հայոց ազգ. եկեղեցիին :

Տ. Ճէյմս Պրայս հրաւեր կարկաց միջազգային մարդասէրներուն շարունակել իրենց օգնութիւնը հայ արիւններուն և որբերուն ինպսպ : Այս հրաւերին ուժ կուտայ օրիորդ Մէլինկէր, որ վեց տարի անցուցած է Հայաստանի մէջ : Այս աղին Ամերիկահայ յայտարարեց Հայերուն պակասած բանը չէ թէ քաջութիւնը, այլ զէնքն է և թէ անոնք իրենց բողոքութիւնը նոյն տուէրն այն միակ քաղաքին մէջ ուր զէնք ունէին, ի Չէլթիւն :

Անգլիական ընկերակցութեան նախագահ Տ. Սթէֆէնսըն ժողովին աշխատութեանց աւարտումէն ետք ճիւղ հացկերոյթ մը տուաւ ի պատիւ օտարազգի պատգամաւորներուն :

Ա. Զ. Դ

Գիտման և վաճառման հին ու նոր ամէն տեսակ նամակագրութիւնը (բուլ) գիտել Ապոստոլական մեղիթի դէմ ծիսականաւ Ս. Զարհանէլեանի խառնութիւնը :

ԼՐԱՔԱՂ

Լ. Արմենիէն կ'արտատպեն հետևեալ լուրը որուն պատասխանատուութիւնը այն թերթին թղթակիցին վրայ կը ձգենք :

Կ. Պուլիս. «Թուրքերը շատ կը խրոխտան իրենց դիւրին յաղթանակներուն վրայ ի Բալկանաստան : Կը հրատարակեն Տեառններ ու ընդմով կը սպառնան Եւրոպայի իրենց ետեւանին շանթովը : Հնչակեան կուսակցութիւնը, որ հոս 7000 անգամ ունէր մինչև Սարտեանները վար տուին Աւետիս Նազարպէկին գիւմակը, այսօր այն աստիճան տկարացած է որ ճանձ մը անգամ չի կրնար ըստանալ : Գրոշակեան կուսակցութիւնը, որ երբեմն 5000 անգամ ունէր, կը պահէ տակաւին իր գործութիւնը, շնորհիւ իր բարոյական գերազանցութեան» :

— Բարիդ. «Նուպար բաշան է որ կը պահէ քաղաքիս հայ ապստամբարանը՝ հիմնուելէն ի վեր : Աւելի քան 2000 փախստականներ կը պատսպարուին ու կը սընանին, Բարիդ ու Եգիպտոս, այս առատաձեռն մարդասէրին ծախքովը» :

— Նիքոսիա. «Հայերուն գաղթականութիւնն ի Կիպրոս կը շարունակէ : Արդէն 1000 ը կանցնին : Քաղաքիս հայ որբանոցը բացուեցաւ ապրիլ 19 ին, 25 որբերով, որոնց 6ը ցորեկով իր : Գիշերօթիկներուն մէջ 6ը բան մը կը վճարեն իրենց յանձնաձեռն համար : մնացեալները ձերբակալու պիտի սնուցուին : Խնամակալութեան նախագահն է հայր Ղեւոնդ Տ. Նահապետեան, գանձապետը Պ. Յարութիւն Նազարէթեան, տնօրէնը Պ. Յարութիւն» :

ԻՐԱՆԻՈՒՆՔ

Լիբրաւիտիստ նամ Բարիս կազմութեանը մուհարրիքի Մ. Ռօշֆօր՝ թիւրք հեղինակներին փրկանքը կազմակերպողն ու ընդլայնող վերջէք թէսպիւրնոտ պուլընտը զընդ պէյան ինքն իր :

Մ. Ռօշֆօր տախի ընդլայն վերջէք իշխան շու հօլտա միւրաճառ թուրքումը տըր :

Կլորա կազմութեանը վերջէք թէսպիւրն ու ընդլայն վերջէք մուհարրիքի իր Սթանպուլում հօլանդմը զընդ պէյան ինքն իր : Բարիստէ մուհարրիքի Ռօշֆօր պիւր մէքթուպ հօլալուպ, մուհիմ մէսէլէր իշխան կէօրիւմէք ինքն միշ իր : Մ. Ռօշֆօր մէքթում բաշա իւր կէօրիւմէքի գապուլ իտուպ, անըն իւր սէօլլէրնոտէն նէ մապստ իւր կէլմիշ օլտըլընդ ֆարգ ինքն : Եւրոպայի Սթանպուլն լէհիւտէ պուլընմադ լիւն պիւր պէօլիւք մէպուղ վերջէքիւնի Չիյա Ռօշ-

ֆօրա պիւրիտի իսէտէ, Ռօշֆօրն թէրէտուտ կէօլմէքիւնի իւրէրնէ՝ բաշա Ալմանիա իմէքթաթըն տախի Սթանպուլն ալթը միլիոն ընդլայն ալթը օլտըլըն սէօլլէտի : Քէզա կէնճ թիւրքիա նամ թիւրք գօմիթէտէն պիւր գաշ քիշիյէ ընդլայն վերջէք օլտըլըն իսթիլէրի իւր Մ. Ռօշֆօրա պիւրիտէսին տէ վէ օլտըն շիմտի Սթանպուլն բօլիթիգաթըն թուրքումա օլտըլըն իֆաթէ ինքն ինքն : Մ. Ռօշֆօր Պիլմարգա տա ընդլայն վերջէք մէ տէյու՝ սիվալ էլլէտի. — բաշա՝ խալիք, Սթանպուլ Պիլմարգա զիլլէք մէք հէտիլէր վէ բէք ճէսիմ պիւր մէպուղ վերջէք ինքն ինքն, գապուլ ինքն, տէյու ճէվապ վերտի :

Մ. Ռօշֆօր տախի «Թիւրքիա» նըն ալթուլարը ալթուլըն թէպտիլ ինքն ինքն գապուլ գուլվէի ճաղիլէք մալիք օլտմալար» տէյուպ, բաշան թէքիլիքի գալթիլէր ըտտ ինքն ինքն :

Վապա Հանրի Ռօշֆօրն ճէվապը ըտտ վերջէքիւնէ էմիլիլ իսէտէ, Բարիս կազմակերպըն պիւր տիլէր գըմըտէ Սթանպուլն պալիլէրնի շու սըրա պօլպօլ խարճամապա վէ օ հօլլէ կիւլպիւն լէրճէ Լիմէնիլէրտէն տէօրիւք գանլարտան ինքն ինքն ինքն :

ԵԱՀՈՒՏԻԼԵՐ

Կիլիկիոյ Զաքարիայ նամ կազմեա Եւրոպիլէրնի կէն պիւր գըրալըք թէքիլ ինքն ինքն թաալվարընայ պուլընտըլընտան տօլալը պէրվէլի աթի մալիմալար վերջէք տիւ :

«Պիւր գաշ սէնէլլէրտէն պէրու կէնի Եւրոպիլէրն, թէքիլի իշխան Եւրոպիլէրտէ պիւր բօլըրում մէվնու օլտալ, բէնտի մէքհէպ ու միլիլէթիլի իշխան թէվլիգաթ ալթընտ պուլընտ միլլէթտալարըն Պալէստինէ սըսըլընտըմադ զալլէթիւտէ պուլընտըլար :

Մէքթուլ բօլըրում իքի սէնէ մուպտտէմ Չիկապօտա թալթը թէվիլիլէ ալթը վէ պու կիւն չօգ իլլէրլէմիլ տիւ : Լիւրապտա տախի մէսէլէ էհէմիլիլէթի պիւր հալ քէսպ ինքն ինքն օլտալ, սէնէի հալիլէին օգտտոն 25 ինքն Միւնիստէ Եւրոպիլէր մէպուսանընտան միլլէթէքիլ պիւր պէօլիւք մէքիւ թէքիլիլ օլթնաճադ տըր : Պուլ մէքիլ մէքթուլ բօլըրում մէվ գըլի ինքն գօնըմապը հազգընտա լալըմ կէլէն մուսմէլաթը թալթը թէվէքիլէրէ ալթաճադ տըր : Մէքթուլ մէքիլսէ մէպուսալ ինքն ինքն ինքն ինքն ինքն Եւրոպիլէր թօլլալտըլար : վէ պու ինքն ինքն պիւր չօգ խալիմալար նուլթըլար իրապ ինքն պիւր օլթնա բօլըրում ինքն ինքն ումում Ամերիկապա

